ժիշտների աչքն է հասած դէպի արևելքը և առանձին ուշադրութեան առարկայ է դառնում արևելեան թախծոտ ու մելամաղձոտ եղանակները։

Մեր հայ երաժիշտներից Ն. Ֆ. Տիգրանեան և Ապենդիարեանն են, որ յայտնի են այդ ուղղութեամբ. իսկ սրանց յաջորդ կարելի է համարել պ. Ս. Բարխուդարեանին։ «Արևելեան պարերը» օր. 1-ն է, որի մէջ պարունակուած է չորս պար. 1 բէ մաժոր, 2 բէ մինոր, 3. մի բէմոլ մաժոր, և 4. բէ մաժոր, բոլորն էլ դաշնամուրի համար։ Ընդհանրապէս արևելեան պարերը իրենց ամբողջ նրբութեամբ դժուար է կլաւիատուրայով արտայայտել. արևելեան թառն ու քեամանչան, որպէս արևելեան ծնունդ, ոգի ու տրամադրութիւն է ստեղծում ունկնդրի մէջ. իսկ դաշնամուրը կարծէք խորթ է և անհարազատ արևելեան եղանակների համար, բայց այնուամենայնիւ պ. Բարխուդարեանը, ինչքան որ հնարաւոր է, աշխատել է հարազատութեամբ արտայայտել։

Ռուբէն արեղայ

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Նորին Սրբութիւն Ազգիս Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գէորգ Ե.-ը բարեհաճեց յունիսի 25-ին մեկնել Բիւրական՝ ամարային հանգստեան։

Առաւօտեան ժամի 7-ին զանգակների զօղանջիւնը հրաւէր կարդաց Մայր Աթոռի միաբանութեան՝ շքանշաններով ու պարգևներով զարդարուած ընդառաջ գնալ Նորին Սրբութեան և ողջունել Սրբազնագոյն Հայրապետին Վեհարանի մուտքի առաջ։ Փոքր ինչ յետոյ Հոգևոր Տէրը ելնում Հայրապետանոցից և շքերթն առաջնորդեց նորան դէպի Մայր Տաճար։ Իջման ս. սեղանի առաջ աղօթելու և եկեղեցու բարօրութեան համար աղօթելուց և խաչ-աւետարանը համբուրելուց յետոյ Նորին Սրբութիւնը նոյն շքով առաջնորդուեց մինչև դարպասը՝ Վաղարշապատի շուկայի հրապարակի առաջ։ Ներնական ժողովրդից մի խուռն բազմութիւն փութացել էր նոյնպէս բարի երթ մաղթելու Հայրապետին։ Նորին Վեհափառութեան ուղեկցեցին մինչև ամարային հանգստավայրը Տ. Սահակ արքեպիսկոպոսը, դիւանապետ Տ. Բագրատ վարդապետը, վանական կառավարութեան նախագահ Տ. Մուշէ վարդապետը, խաչ և դաւազան կրող Տ. Տ. Աղեքսանէս վարդապետն ու Վրթանէս աբեղան։

Ազգիս Վեհափառ Հայրապետի բարձր հրամանով Տ. Տ. Գէորգ Ե. Սրբազնագոյն Կաթողիկոսի օծման և գահակալութեան տօնն ու հանդէսը կատարուելու են ոչ յուլիսի 1-ին, այլ Վարդավառին։

Նորին Սրբութեան Ազգիս Վեհափառ Հայրապետի հրամանով Տ. Յուսիկ արքեպիսկոպոսը յունիսի 18-ին սարկաւագութեան աստիճան տուեց Մայր Աթոռի միաբան Երևանցի Կարապետ Յարութիւնեանցին, որ աւարտել է Երևանի թեմական դպրանոցը և մի քանի տարի ուսուցչի և աւագ ուսուցչի պաշտօններ վարել հայոց եկեղեցական-ծխական դպրոցներում, և 20-ին աբեղայ ձեռնադրեց Մայր Աթոռի միաբան Գէորգ սարկաւագ Զէօրէքչեանին։ Տ. Գէորգ աբեղան Գէորգեան Հոգևոր ճեմարանի ընթացաւարաններից է, որ 1889 թուին սարկաւագութեան աստիճան ստանալուց յետոյ ուղարկուել է արտասահման, մասնագիտօրէն երաժշտագիտութիւն ուսել և վերադարձից յետոյ մինչև այժմ ուսուցչական պաշտօն վարել Նոր-Նախիջևանի հոգևոր դպրանոցում։

Այս տարի Գէորգեան Հոգևոր ճեմարանի լիակատար դասընթացն աւարտեցին հետևեալ ութ անձինք, որոնց անուններին կցում ենք նաև իրենց վերջնական շարադրութիւնների նիւթերը.

1. Աստուածատրեան Բաղդասար Մշեցի—Յոդնածութեան հոդեբանութիւնը. յոդնածութիւնը դպրոցներում ընդհանրապէս և այդ երևոյթի անմիջական դիտողութիւնը ճեմարանի վարժոցում։ 2. Դաւիթխանեան Յովսէփ Նոր-Զուղայեցի—Նոր-Զուղայի արդի կացութիւնը և համառօտ ակնարկ անցեալի պատմութիւնից։ 3. Կարոյեան Սմբատ Դիլիսկեցի (Ախալքալաքի գաւ.)—Շիրվանզադէի գլխաւոր վիպական երկերի վերլուծութիւնը։ 4. Մինասեան Մկրտիչ Ախալքալաքցի—Սելջուկների երևան գալը Հայաստանում և նուաճելը՝ ըստ Հայկական աղբիւրների։ 5. Յարութիւնեան Արտաւազդ Բայբախտարցի (Ալեքսանդրապոլի գաւ.)—Ղ. Աղայեանը որպէս մանկավարժ։ 6. Սարգսեան Պետրոս Ախալցխացի—Հայ ժողովրդական քնարերգական ստեղծագործութեան մօտիւները և ձևերը։ 7. Վարդապետեան Վարդան Շուշեցի—Ղարաբաղի հողատիրութեան ձևերը։ 8. Վարդիկեան Պետրոս Վաղարշապատցի—Հայեցողական կամ դիտողական ուսուցումն։

Նորաւարտներն ըստ աւանդական սովորութեան յունիսի 2-ին հոգեհանգիստ կատարել տուին իրենց Մեծ Բարերար երջանկայիշատակ Գէորգ Դ. Կաթողիկոսի շիրմի վերայ: Ներկայ էին Տ. Տ. Գէորգ Ե. Սրբազնագոյն Հայրապետը, Մայր Աթոռի միաբանութիւնը, ճեմարանի ուսուցիչներն ու աշակերտները և աղօթաւորների խուռն բազմութիւն: Նորաւարտ Վարդան Վարդապետեանը մի երախտագիտական սրտառուչ ճառ արտասանեց իւր և ընկերների կողմից ճեմարանի Մեծ Հիմնադրի յիշատակին և շնորհակալութիւն Մայր Աթոռին իրենց վայելած շնորհի և խնամքի համար, ուխտելով, որ չեն մոռանալ հայութեան գաւերն ու հաւատարիմ սպասաւոր կը լինեն նորա կարիքներին: Հանդէսից յետոյ նորաւարտները՝ գլուխ ունենալով ճեմարանի տեսուչ Տ. Բագրատ վարդապետին, ներկայացան Սրբազնագոյն Հայրապետին, նորա օրհնութիւնն առնելու: Նորին Սրբութիւնն օրհնեց դէպի կեանք մեկնող երիտասարդներին և յորդորեց, որ չմոռանան Մայր Աթոռը և իրենց գործունէութեամբ պիտանի անդամներ լինին հայութեան համար:

ճեմարանի դպրոցական բաժինն այս տարի աւարտեցին 13 հոգի, որոնցից մեծագոյն մասը խնդրամատոյց է եղել լսարանական բաժինն ընդունուելու: Նորաւարտներն են.

1. Աւագեան Սարգիս Ախալքալաքցի 2. Բարսեղեան Եղանոս Դաշբուռունցի 3. Գիւլնազարեան Գրիգոր Օշականցի 4. Կարաքէհէյեան Խաչատուր Զամաշցի (Տրապիզոնի թեմ.) 5. Կոստանեան Արամ Վաղարշապատցի 6. Հայրապետեան Աբրահամ Մինքենդցի (Զանգեզուրի գ.) 7. Ղազարեան Ղազար Ղալատարցի (Սալմաստի գաւառ) 8. Մանասէրեան Մանասէր Աղջաղշլաղցի (Եր. Նահանգ) 9. Յարութիւնեան Յարութիւն Նոր-Նախիջևանցի 10. Յարութիւնեան Յարութիւն Դաւալուեցի 11. Սահակեան Արամ Կաղզուանցի 12. Սուքիասեան Արմենակ Զարջոյեցի 13. Քնթոյեան Արիստակէս Խոտպիացի (Ախալքալաքի գ.):